ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.11.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/296

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմ
Մասնակից՝ «Օվալ» Պլաստիկ ՍՊԸ

Մասնակցությամբ՝
ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ներկայացուցիչ՝ Ռ. Հովհաննիսյանի
«Օվալ» Պլաստիկ ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Վարդանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-21/7» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, մեկանգամյա օգտագործման թղթե (ստվարաթղթե) բաժակների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 14.10.2021թ.-ի թիվ 26/26-1/16803-2021 գրությամբ «Օվալ» Պլաստիկ ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի 07.10.2021թ.-ի թիվ 1/4480-2021 գրության հիման վրա, 14.10.2021թ.-ին «Օվալ» Պլաստիկ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 14.10.2021թ.-ին:

15.10.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/296 համարի ծածկագիրը:

26.10.2021թ.-ին և 12.11.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 26.10.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 12.11.2021թ.-ին:

2. <u>ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 07.10.2021թ.-ի թիվ 1/4480-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը մեկանգամյա օգտագործման թղթե (սփվարաթղթե) բաժակների ձեռքբերման նպատակով հայտարարել է ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-21/7 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ Ընթացակարգ), որի հրավերը համակարգում հրապարակվել է 23.09.2021 թվականին:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, մասնակցության հայտ է ներկայացրել «Օվալ» Պլաստիկ ՍՊ ընկերությունը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «Օվալ» Պլաստիկ ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում բացակայում են Դիմում–հայտարարությունը (Հավելված 1-ը), ինչպես նաև ապրանքների տեխնիկական բնութագիր դաշտում հստակ չեն՝ «…մեջտեղի հատվածում ՀՀ ԱԺ լոգոյի (կտրամադրվի), … Բաժակի չափսերը՝ վերին հատվածի (A) տրամագիծը՝ 67-69,4մմ., ստորին հատվածի (B) տրամագիծը՝ պետք է կազմի վերին հատվածի (A) 72 տոկոսը, հատակից ներքև ընկած հատվածը՝ 4-6մմ., ընդհանուր բարձրությունը՝ 82-84մմ. Ապրանքները նոր է չօգտագործված (նոր)» նախադասությունները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել 04.10.2021թ.-ին՝ առաջարկելով մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Մասնակցի կողմից անհամապատասխանությունները չեն շտկվել:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ՝ եթե մասնակիցը Կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի

ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է «Օվալ» Պլաստիկ ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը գնահատել անբավարար և մերժել է վերջինիս հայտը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Կարգի 45-րդ կետով՝ Ձեզ ենք տրամադրում «Օվալ» Պլաստիկ ՍՊ ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-21/7» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Օվալ» Պլաստիկ ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Օվալ» Պլաստիկ ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 15.10.2021թ.-ի գրությամբ դիմել է «Օվալ» Պլաստիկ ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.10.2021թ.-ի թիվ 26/26-1/16803-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը, 19.10.2021թ.-ին ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ, հայտնել է հետևյալը.

«15.10.2021թ. էլ. փոստի միջոցով տեղեկացվել ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը 14.10.2021թ. թիվ 26/26-1/16803-2021 գրությամբ «ՕՎԱԼ» Պլաստիկ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին (այսուհետ՝ Բողոքներ քննող անձ) ներկայացնելով համապատասխան հիմքեր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված մասնակցի կարծիքը գրավոր ձևով Բողոքներ քննող անձին պետք է ներկայացվի երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Ելնելով վերոգրյալ իրավանորմի դրույթներով, հայտնում ենք Ձեզ, որ «ՕՎԱԼ» Պլաստիկ ՍՊ ընկերությունը դիմել է ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-21/7 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին մասնակցելու համար: Տեխնիկական պատճառներով Ընկերության կողմից ուղարկված նամակում չեն պահպանվել ապրանքների տեխնիկական բնութագիր դաշտում կատարված փոփոխությունները, ինչպես նաև չի պահպանվել «Դիմում-հայտարարություն» փաստաթղթի կցում գործողությունը էլեկտրոնային համակարգում:

Արդյունքում, տեխնիկական թյուրիմածության պատճառով, հայտը սահմանված ձևաչափով և ժամկետում համակարգի միջոցով չի հաջողվել ներկայացնել: Նմանօրինակ տեխնիկական պատճառներով (ընկերությունում ինտերնետի խափանում) նաև հնարավոր չի եղել սահմանված ժամկետում՝ 05.10.2021թ. ընթացքում (հանձնաժողովի կողմից տրամադրված մեկօրյա ժամկետ) շտկել առկա թերությունները:

Հայտնում ենք, որ «ՕՎԱԼ» Պլաստիկ ՍՊԸ-ն պատրաստկամ է և պարտավորվում է պատվիրատուին ներկայացնել ապրանքի տեխնիկական բնութագիրը և Դիմում-հայտարարությունը թղթային կամ էլեկտրոնային տարբերակով և խնդրում ենք «ՕՎԱԼ» Պլաստիկ ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

4. <u>ՍՑ-LO-2021/296 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից մեկանգամյա օգտագործման թղթե (ստվարաթղթե) բաժակների ձեռքբերման նպատակով 23.09.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-21/7» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել միայն «Օվալ» Պլաստիկ ՍՊԸ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 02.10.2021թ.-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ «Օվալ» Պլաստիկ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ կցված փաստաթղթերում բացակայում են Դիմում–հայտարարությունը (Հավելված 1-ը), ինչպես նաև ապրանքների տեխնիկական բնութագիր դաշտում հստակ չեն՝ «…մեջտեղի հատվածում ՀՀ ԱԺ լոգոյի (կտրամադրվի), … Բաժակի չափսերը՝ վերին հատվածի (A) տրամագիծը՝ 67-69,4մմ., ստորին հատվածի (B) տրամագիծը՝ պետք է կազմի վերին հատվածի (A) 72 տոկոսը, հատակից ներքև ընկած հատվածը՝ 4-6մմ., ընդհանուր բարձրությունը՝ 82-84մմ. Ապրանքները նոր է չօգտագործված (նոր)» նախադասությունները:»:

iv. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 41-րդ կետով, 28.09.2021թ.-ին որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Օվալ» Պլաստիկ ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

v. Արձանագրության 9-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, 06.10.2021թ.-ին արձանագրել է, որ «Օվալ» Պլաստիկ ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Նույն կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է կայացվել Մասնակցի հայտը գնահատել անբավարար:

vii. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.11.2021թ.-ին ներկայացված թիվ Ն/26-1/27776-2021 գրության համաձայն՝ «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-21/7» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «Օվալ» Պլաստիկ ՍՊԸ-ին 04.10.2021թ.-ին ժամը 17:28:18-ին ուղարկվել է ծանուցում «Դիմում-հայտում շտկում կատարելու մասին» վերնագրով, Մասնակիցը «Դիմում-Հայտարարության շտկում» էջ մուտք է գործել 05.10.2021թ.-ին ժամը 09:22:17-ից 05.10.2021թ.-ը ժամը 09:25:37-ը, սակայն վերջինիս կողմից շտկում չի ներկայացվել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների

նախարարության կողմից 14.10.2021թ.-ի թիվ 26/26-1/16803-2021 գրությամբ «Օվալ» Պլաստիկ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 18.05.2017թ.-ի թիվ 534-Ն հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 10-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով նախատեսված կարգավորումները…..:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի՝

- «ա» և «բ» պարբերությունների համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը, իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին:

- «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը,

ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր)

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից մեկանգամյա օգտագործման թղթե (ստվարաթղթե) բաժակների ձեռքբերման նպատակով 23.09.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-21/7» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.11-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝

առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

Եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում, ներառյալ եթե սույն հրավերով նախատեսված է հայտի ապահովման ներկայացման պահանջ և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտով ապահովումը ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով, սակայն սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել դրա բնօրինակը, իսկ գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխա-

նություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 4.3-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ 4.3 մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված 1-ի, իսկ սույն ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված պայմանի կիրառման դեպքում՝ դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված 1.1-ի՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը, որը ներառում է՝ հավաստում սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից մեկանգամյա օգտագործման թղթե (ստվարաթղթե) բաժակների ձեռքբերման նպատակով 23.09.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-21/7» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.10.2021թ.-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 7-րդ կետով արձանագրվել է «Օվալ» Պլաստիկ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ կցված փաստաթղթերում բացակայում են Դիմում–հայտարարությունը (Հավելված 1-ը), ինչպես նաև ապրանքների տեխնիկական բնութագիր դաշտում հստակ չեն՝ «…մեջտեղի հատվածում ՀՀ ԱԺ լոգոյի (կտրամադրվի), … Բաժակի չափսերը՝ վերին հատվածի (A) տրամագիծը՝ 67-69,4մմ., ստորին հատվածի (B) տրամագիծը՝ պետք է կազմի վերին հատվածի (A) 72 տոկոսը, հատակից ներքև ընկած հատվածը՝ 4-6մմ., ընդհանուր բարձրությունը՝ 82-84մմ. Ապրանքները նոր է չօգտագործված (նոր)» նախադասությունները:», ինչով պայմանավորված Հանձնաժողովը 28.09.2021թ.-ին որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Օվալ» Պլաստիկ ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սակայն արձանագրության 9-րդ կետով 06.10.2021թ.-ին արձանագրվել է, որ «Օվալ» Պլաստիկ ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի

շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունները, ինչով պայմանավորված որոշում է կայացվել Մասնակցի հայտը գնահատել անբավարար:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.11.2021թ.-ին ներկայացված թիվ Ն/26-1/27776-2021 գրության համաձայն՝ «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-21/7» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «Օվալ» Պլաստիկ ՍՊԸ-ին 04.10.2021թ.-ին ժամը 17:28:18-ին ուղարկվել է ծանուցում «Դիմում-հայտում շտկում կատարելու մասին» վերնագրով, Մասնակիցը «Դիմում-Հայտարարության շտկում» էջ մուտք է գործել 05.10.2021թ.-ին ժամը 09:22:17-ից 05.10.2021թ.-ը ժամը 09:25:37-ը, սակայն վերջինիս կողմից շտկում չի ներկայացվել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում

հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.10.2021թ.-ի թիվ 26/26-1/16803-2021 գրությամբ «Օվալ» Պլաստիկ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/296 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Օվալ» Պլաստիկ ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**